ԱՐԻ ՏՈՒՆ-2014

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

Սփյուռքի նախարարության նախաձեռնած <<Արի տուն>> հայրենաճանաչության ծրագիրն այս ամռանը հայրենիք բերեց 1000-ից ավելի սփյուռքահայ պատանիների և աղջիկների: Ըստ ծրագրի նրանք երկշաբաթյա ներկայության առաջին 8 օրերը պետք է ապրեին հայկական օջախներում:

Արարատի մարզի համայնքները ևս ակտիվ գտնվեցին սփյուռքահայ երիտասարդությանը հյուրընկալելու հարցում: Շուրջ 101 երեխաներ սփյուռքի տարբեր վայրերից հյուրընկալվեցին Վեդի (20), Արարատ (16) քաղաքներում, Փ.Վեդի (16), Տափերական (15), Մխչյան (8) և Ավշար (26) գյուղական համայնքներում:

<<Արի տուն>> հայրենաճանաչության ծրագիրն անցկացվել է 8 փուլով:Երեխաները մարզում եղան երեք փուլերի ընթացքում.

2- րդ փուլ- Ավշար,Փ.Վեդի/42/

3-րդ փուլ- Տափերական, ք. Վեդի, ք. Արարատ/51/

5-րդ փուլ- Մխչյան/8/

Հյուրընկալ ընտանիքների թվով Արարատի մարզն ունի ամենաբարձր ցուցանիշը:

Հյուրընկալող ընտանիքների անշահագրգիռ աջակցությունը արժանի է բարձր գնահատանքի: Երեխաների 4-օրյա հանգիստը անցկացվեց Ծաղկաձորի <<Արի տուն>> ճամբարում, իսկ հյուրընկալ յուրաքանչյուր ընտանիքի համար պատրաստվել էր գեղեցիկ նվեր՝ հայերեն տառերով գլոբուս:

Փոքր Վեդիում հյուրընկալված 16 երեխայի տրվեց փոխադրամիջոց՝ էքսկուրսիա կազմակերպելու նպատակով: Ճանապարհորդության առաջին կանգառը «Խոր Վիրապ» վանք-ամրոցն էր: Նրանք ոգեշնչված էին վանքի զարմանալի պատմությամբ:

Եղան այցեր Պարույր Սևակի և Վազգեն Սարգսյանի տուն-թանգարաններ: Երեխաները այցելեցին նաև պատմամշակութային այլ օջախներ:

Հինգ տարիների արդյունքներով մարզային երեսունից ավելի համայնքների շարքում հյուրընկալած սփյուռքահայերի թվով Տափերական համայնքը մտնում է լավագույն հնգյակի մեջ: